26.02.2021
347-30

Տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
Սուրեն Պապիկյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պապիկյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Արփինե Խաչատրյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: 2020 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունվել և դեկտեմբերի 19-ին ուժի մեջ է մտել ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ-ում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» (Կառավարության 2020 թ. դեկտեմբերի 3-ի 1994-Ն որոշում):

Որոշմամբ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել մրցույթի կարգի մասին հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ ընթացակարգով և ի՞նչ պարբերականությամբ է իրականացվելու մրցույթում հաղթող ճանաչված փոխադրող ընկերության սպասարկման որակը և մեքենաների համապատասխանությունը ներկայացված տեխնիկական բնութագրերին սպասարկումն իրականացնելու ողջ ժամանակահատվածում:
2. Ի՞նչ պետական մարմին է իրականացվելու մրցույթում հաղթող ճանաչված փոխադրող ընկերության սպասարկման որակը և մեքենաների համապատասխանությունը ներկայացված տեխնիկական բնութագրերին սպասարկումն իրականացնելու ողջ ժամանակահատվածում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

3. Ի՞նչ պատասխանատվություն է կրում մրցույթում հաղթող ճանաչված փոխադրող ընկերությունը սպասարկման ընթացքում սահմանված պայմանները խախտելու դեպքում:
4. Ո՞ր դեպքում կարող է մրցույթում հաղթող ճանաչված փոխադրող ընկերության հետ պայմանագիրը կասեցվել:
5. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կոնկրետ համայնքի բնակիչների բողոքը այդ համայնքում հաղթող ճանաչված փոխադրող ընկերության գործունեության նկատմամբ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ.՝ (+37410) 560360 +37491407836,
Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am